



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2004թ. հուլիսին /վերլուծություն/

2004թ. հուլիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 8487 գործարքներ, որոնց քանակը 2003թ. հուլիսի համեմատ աճել է 25.4%-ով, իսկ 2004թ. հունիսի համեմատ՝ 2.4 %-ով:

2004թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2004թ հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3535 օտարման գործարքների 90.4 %-ը կազմել են առուվաճառքները, 9.3 %-ը՝ նվիրատվությունները և 0.3%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 44.9%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ 44.0%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2004թ. հուլիսին, 2003թ. հուլիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 20.5%-ով, իսկ 2004թ. հունիսի համեմատ՝ 5.0 %-ով: 2004թ. հուլիսին Երևան քաղաքում անշարժ գույքի 1382 առուվաճառքի գործարքների 61.4%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում քաղաքում, 2003թ. հուլիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 12.2 %-ով, իսկ 2004թ. հունիսի համեմատ աճել՝ 23.2%-ով:

2004թ. հուլիսին Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

/1 ԱՄՆ դոլարը 2004թ. հուլիսին համարժեք է 527.0 դրամի /

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. հուլիսին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
		հուլիս 2003թ.	հուլիս 2004թ.	հունիս 2004թ.
Կենտրոն	250.0-970.0	388.3	464.8	456.8
Արաբկիր	200.0-560.0	284.3	366.5	359.1
Քանաքեռ-Զեյթուն	130.0-330.0	177.3	224.6	222.6
Նոր-Նորք	115.0-250.0	133.4	191.8	189.1
Ավան	120.0-190.0	132.1	183.4	180.7
Էրեբունի	120.0-300.0	146.3	178.8	176.5
Շենգավիթ	120.0-250.0	145.2	210.5	208.4
Դավթաշեն	130.0-260.0	171.3	229.3	225.7
Աջափնյակ	120.0-250.0	146.1	208.4	204.6
Մալաթիա-Սեբաստիա	120.0-250.0	144.2	206.1	205.3
Նուբարաշեն	65.0-100.0	66.1	79.5	79.1
Միջինը Երևանում /բացի Նորք-Մարաշից/	65.0-970.0	175.9	231.2	228.0

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2004թ. հուլիսին, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 1.4 %:

2004թ. հուլիսին մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 475 բնակարաններ, որոնց քանակը 2003թ. հուլիսի համեմատ աճել է 5.1%-ով, իսկ 2004թ. հունիսի համեմատ նվազել՝ 3.3%-ով:

2004թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2004թ. հուլիսին /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			հուլիս 2003թ.	հուլիս 2004թ.	հունիս 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.4	63.2	63.2
	Ապարան	18.0-40.0	27.2	35.2	33.1
	Թալին	18.0-40.0	25.0	31.8	31.2
Արարատ	Արտաշատ	22.0-88.0	54.4	55.8	55.8
	Մասիս	20.0-90.0	54.4	60.2	59.9
	Վեդի	20.0-45.0	31.6	42.5	41.5
	Արարատ	22.0-50.0	31.5	39.9	38.6
Արմավիր	Վաղարշապատ	35.0-102.0	84.1	91.1	88.9
	Արմավիր	21.0-58.0	45.5	58.7	54.7
	Մեծամոր	17.0-50.0	30.7	32.6	32.6
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.5	34.8	33.5
	Գավառ	20.0-50.0	30.2	33.6	33.6
	Մարտունի	18.0-38.0	29.5	34.2	34.1
	Վարդենիս	10.0-21.0	17.1	17.6	17.5
	Ճամբարակ	13.0-30.0	16.3	17.9	17.9
Լոռի	Վանաձոր	30.0-90.0	60.8	62.3	62.3
	Ստեփանավան	20.0-48.0	33.2	36.2	35.6
	Սպիտակ	17.0-40.0	23.8	36.9	35.9
	Ալավերդի	15.0-40.0	25.4	25.8	25.8
	Տաշիր	15.0-28.0	19.3	25.2	24.2
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	83.8	93.5	89.5
	Նոր Հաճն	35.0-75.0	52.0	63.4	59.6
	Բյուրեղավան	15.0-45.0	35.2	41.2	38.2
	Եղվարդ	28.0-55.0	40.3	47.5	44.8
	Հրազդան	18.0-55.0	30.7	38.2	37.5
	Ծաղկաձոր	22.0-95.0	75.7	82.6	80.5
	Չարենցավան	13.0-55.0	31.0	38.8	36.8
Շիրակ	Գյումրի	30.0-100.0	71.6	72.3	72.3
	Արթիկ	17.0-45.0	25.2	31.4	29.6
	Մարայիկ	15.0-33.0	23.6	28.4	27.6
Սյունիք	Գորիս	21.0-45.0	29.6	35.8	35.8
	Կապան	18.0-52.0	29.0	33.8	33.8
	Սիսիան	17.0-37.0	27.5	34.6	32.6
	Մեղրի	18.0-58.0	25.1	25.4	25.4
	Ագարակ	18.0-50.0	22.2	25.2	25.2
	Քաջարան	13.0-30.0	18.4	19.9	19.5
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	35.2	37.3	35.3
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.8	49.2	47.2
	Ջերմուկ	18.0-50.0	41.1	43.6	41.1
Տավուշ	Դիլիջան	15.0-54.0	36.1	41.7	38.9
	Իջևան	23.0-60.0	40.3	49.6	45.5
	Բերդ	15.0-43.0	29.2	30.3	30.3
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.7	27.7	27.4

2004թ. հուլիսին հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի տների բնակարանների միջին գների ամսեկան աճը կազմել է 2.9%:

2004թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 478 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 123, մյուս մարզերում միասին վերցրած՝ 355: 2004թ. հունիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 0.4 %-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 30.8 %-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 7.1%-ով: 2003թ. հուլիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 27.1 %-ով, ընդ որում Երևանում՝ 32.3%-ով, իսկ մյուս մարզերում միասին վերցրած՝ 25.4%-ով:

2004թ. հուլիսին Երևան քաղաքի համայնքներում անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. հուլիսին /ԱՄՆ դոլար/	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված շինության 1քմ մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		հուլիս 2003թ.	հուլիս 2004թ.	հունիս 2004թ.
Կենտրոն	255.0-990.0	391.0	472.8	470.8
Արաբկիր	205.0-580.0	286.0	382.5	380.6
Քանաքեռ-Զեյթուն	140.0-360.0	178.4	225.6	224.1
Նորք-Մարաշ	120.0-390.0	294.0	337.3	335.9
Ավան	125.0-200.0	133.0	188.2	187.2
Էրեբունի	130.0-320.0	147.0	184.2	183.0
Շենգավիթ	120.0-260.0	146.0	211.1	209.8
Դավթաշեն	140.0-260.0	172.0	230.8	229.0
Աջափնյակ	125.0-230.0	147.0	212.2	210.6
Մալաթիա-Սեբաստիա	125.0-250.0	145.0	210.2	208.5
Նուբարաշեն	65.0-110.0	70.0	81.0	80.1
Միջինը Երևանում /բացի Նոր-Նորքից/	65.0-990.0	191.8	248.7	247.2

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2004թ. հուլիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գների ամսեկան աճը կազմել է 0.6%:

2004թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված անհատական բնակելի տների առուվաճառքների պայմանագրային գների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և դրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2004թ. հուլիսին /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան շուկայական միջին գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			հուլիս 2003թ.	հուլիս 2004թ.	հունիս 2004թ.
Արագածոտն	Աշտարակ	60.0-110.0	82.5	85.4	84.5
	Ապարան	20.0-60.0	38.8	38.9	38.9
	Թալին	20.0-65.0	28.1	33.4	33.2
Արարատ	Արտաշատ	50.0-90.0	61.6	62.1	62.1
	Մասիս	50.0-90.0	62.4	63.4	63.2
	Վեդի	25.0-65.0	36.3	46.5	43.5
	Արարատ	20.0-60.0	37.4	41.0	39.9
Արմավիր	Վաղարշապատ	70.0-120.0	89.3	92.1	90.3
	Արմավիր	35.0-90.0	52.2	59.4	55.9
Գեղարքունիք	Սևան	20.0-60.0	36.4	36.4	36.4
	Գավառ	20.0-60.0	39.8	39.9	39.9
	Մարտունի	20.0-55.0	33.7	36.6	36.3
	Վարդենիս	15.0-45.0	21.2	21.3	21.3
	Ճամբարակ	15.0-40.0	18.9	20.3	20.2
Լոռի	Վանաձոր	50.0-90.0	68.3	69.9	69.8
	Ստեփանավան	15.0-60.0	33.5	37.7	37.3
	Սպիտակ	20.0-55.0	24.1	38.0	37.9
	Այվերդի	15.0-50.0	25.8	27.1	26.8
	Տաշիր	15.0-40.0	19.8	26.0	25.8
Կոտայք	Աբովյան	60.0-120.0	92.2	94.3	93.1
	Նոր Հաճն	40.0-80.0	54.2	64.2	61.3
	Բյուրեղավան	25.0-60.0	38.1	41.9	39.7
	Եղվարդ	30.0-60.0	47.1	48.2	47.7
	Հրազդան	25.0-60.0	39.8	40.6	40.6
	Ծաղկաձոր	60.0-100.0	84.9	87.9	87.9
	Չարենցավան	20.0-55.0	33.3	39.5	38.4
Շիրակ	Գյումրի	60.0-120.0	90.6	91.6	91.6
	Արթիկ	15.0-50.0	28.6	32.4	30.1
	Մարալիկ	15.0-50.0	23.9	29.3	28.7
Սյունիք	Գորիս	20.0-60.0	31.5	37.6	37.5
	Կապան	20.0-60.0	30.9	35.1	34.9
	Միսիան	20.0-55.0	28.5	35.2	33.8
	Մեղրի	15.0-40.0	28.1	28.2	28.2
	Ագարակ	15.0-40.0	24.6	28.1	27.9
Վայոց Ձոր	Վայք	20.0-60.0	36.9	38.4	37.0
	Եղեգնաձոր	25.0-65.0	49.1	49.9	49.4
	Ջերմուկ	25.0-65.0	43.2	44.3	43.4
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	39.1	42.4	40.2
	Իջևան	30.0-65.0	41.1	50.4	46.6
	Բերդ	20.0-55.0	30.8	31.4	31.2
	Նոյեմբերյան	20.0-55.0	30.7	30.8	30.8

2004թ. հուլիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների ամսական աճը կազմել է 2.0%:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հուլիսին հանրապետությունում օտարվել են 1583.88 հա /այդ թվում 28.86 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողեր, որից 1517.82հա կազմել

են գյուղատնտեսական նշանակության հողերը: Ընդ որում 1535.63 հա հողերի /այդ թվում 28.61հա Երևանում/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից 1470.22 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Վաճառվել են նաև 2 միավոր արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 1 միավոր /1.00 հա/ Արարատի մարզում և 1 միավոր /1.17 հա/ Երևանում:

Օտարված 48.18 հա /այդ թվում 0.17 հա Երևանում/ ընդհանուր մակերեսով հողերի նկատմամբ իրականացվել են նվիրատվության գործարքներ, որից 47.59 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են: Երևանում փոխանակման միջոցով օտարվել են 0.08 հա ընդհանուր մակերեսով բնակավայրերի հողեր: Հողերի առուվաճառքների առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 807.96 հա, որից 805.45 հա գյուղատնտեսական նշանակության են:

Ստորև ներկայացվում է 2004թ. հուլիսին մարզերում վաճառված հողերի միավորների քանակների և մակերեսների բաշխվածությունը, որտեղ ներառված չեն արդյունաբերական օբյեկտների հողերը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/	Միավորների քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	81	11.05	38	7.26	0	0.00	95	6.38	13	2.75
Արագածոտն	0	0.00	0	0.00	0	0.00	38	17.75	18	2.78	0	0.00
Արարատ	25	481.75	111	12.35	0	0.00	77	34.63	56	4.24	0	0.00
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	77	805.45	29	2.51	0	0.00
Գեղարքունիք	0	0.00	1	0.02	1	0.65	4	3.61	1	0.19	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	11	15.18	2	0.21	1	0.003
Կոտայք	24	24.36	0	0.00	0	0.00	116	33.00	125	12.51	0	0.00
Շիրակ	0	0.00	3	0.08	0	0.00	6	8.01	5	0.16	1	0.02
Սյունիք	0	0.00	0	0.00	0	0.00	25	40.22	0	0.00	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	2	2.46	7	0.08	0	0.00
Տավուշ	0	0.00	0	0.00	0	0.00	4	3.82	0	0.00	0	0.00
Ընդամենը	49	506.11	196	23.50	39	7.91	360	964.13	338	29.06	15	2.77

2004թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են հողերի 999 առուվաճառքի գործարքներ, այդ թվում 409-ը՝ գյուղատնտեսական նշանակության, 588-ը՝ բնակավայրերի հողերի նկատմամբ:

2004թ. հուլիսին հողերի առուվաճառքներից 262-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 98-ը՝ Երևանում /16.29 հա/, իսկ 164-ը՝ մյուս մարզերում /520.18 հա/: Աճուրդային կարգով վաճառված հողերից 49 միավորը հանդիսացել է գյուղատնտեսական նշանակության /506.11 հա/, 190-ը՝ /23.13 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 22-ը՝ հասարակական կառուցապատման /6.24 հա/, 1-ը արդյունաբերական նշանակության/1.00 հա/ հողեր:

2004թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքի 409 գործարքներ, այդ թվում աճուրդով՝ 49 և դատարանի վճռով՝ 3 գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝

հողերի 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /հա /	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						26	8.09	800.0	10000.0	2700.0
Ապարան						5	1.44	200.0	1700.0	530.0
Թալին						6	5.55	200.0	1680.0	460.0
Ծաղկահովիտ						1	2.68	170.0	2100.0	270.0
Արարատի մարզ										
Արտաշատ	14	21.75	475.0	3170.0	2450.0	18	6.19	740.0	12000.0	2130.0
Մասիս	1	1.00	495.0	495.0	495.0	13	10.76	400.0	8800.0	1450.0
Վեդի	10	459.00	35.0	330.0	145.0	43	16.19	450.0	7200.0	1300.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						5	25.18	650.0	4650.0	1400.0
Բաղրամյան						8	522.10	200.0	1500.0	550.0
Վաղարշապատ						64	258.17	980.0	14000.0	2200.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ								420.0	1100.0	635.0
Ճամբարակ						1	0.79	100.0	500.0	200.0
Մարտունի								100.0	4000.0	750.0
Սևան								100.0	1000.0	385.0
Վարդենիս						3	2.81	60.0	1180.0	270.0
Լոռու մարզ										
Այվերդի						5	4.54	360.0	5500.0	850.0
Գուգարք						1	0.09	500.0	6000.0	1780.0
Սպիտակ								500.0	3300.0	1000.0
Ստեփանավան						3	1.30	180.0	4000.0	460.0
Տաշիր						2	9.26	100.0	400.0	250.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	5	0.44	910.0	910.0	910.0	66	10.37	600.0	20000.0	5000.0
Եղվարդ	7	18.80	230.0	3290.0	685.0	42	21.36	380.0	10000.0	3400.0
Հրազդան	12	5.12	555.0	4090.0	960.0	8	1.28	250.0	6000.0	900.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						4	4.08	550.0	2500.0	750.0
Ամասիա						1	2.63	80.0	525.0	180.0
Անի						1	1.30	240.0	800.0	300.0
Աշոցք								60.0	210.0	150.0
Արթիկ								140.0	800.0	300.0
Սյունիքի մարզ										
Գորիս						24	39.92	200.0	1600.0	500.0
Կապան								120.0	2000.0	330.0
Մեղրի						1	0.30	400.0	4240.0	840.0
Սիսիան								90.0	1500.0	320.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	2.46	260.0	4000.0	2200.0
Վայք								120.0	3400.0	900.0
Տավուշի մարզ										

Բերդ								100.0	2000.0	650.0
Իջևան					2	3.22		530.0	4000.0	1500.0
Նոյեմբերյան					2	0.60		100.0	8340.0	620.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

2004թ. հուլիսին հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 358 առուվաճառքի գործարքներ, որից 113-ը՝ աճուրդային վաճառքներ, 2-ը՝ ուղղակի վաճառքներ և 2-ը դատարանի վճռով գործարքներ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ հողերի 1000.0 քմ մակերեսի հաշվարկով.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների				
	Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Մտավելագույն	Միջին			Նվազագույն	Մտավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						17	25280.0	250.0	8000.0	2950.0
Ապարան						1	2550.0	250.0	1400.0	340.0
Թային								100.0	800.0	130.0
Ծաղկահովիտ								100.0	800.0	140.0
Արարատի մարզ										
Արտաշատ	21	21000.0	350.0	480.0	472.0	13	12540.0	300.0	6000.0	900.0
Մասիս						36	24760.0	300.0	20000.0	1200.0
Վեդի	90	102475.0	87.0	490.0	350.0	7	5105.2	250.0	2200.0	650.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						3	2200.0	300.0	5000.0	1000.0
Բաղրամյան						1	1240.0	180.0	600.0	210.0
Վաղարշապատ						25	21655.0	300.0	10000.0	1600.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						1	1870.0	300.0	2000.0	600.0
Ճամբարակ								100.0	300.0	140.0
Մարտունի								200.0	600.0	250.0
Սևան								200.0	2000.0	260.0
Վարդենիս								100.0	300.0	120.0
Լոռու մարզ										
Ալավերդի								150.0	600.0	210.0
Գուգարք						1	1345.0	150.0	5200.0	760.0
Սպիտակ								140.0	900.0	180.0
Ստեփանավան						1	800.0	100.0	600.0	160.0
Տաշիր								100.0	300.0	135.0
Կոտայքի մարզ										
Աբովյան						53	48188.0	300.0	10000.0	1950.0
Եղվարդ						70	75150.0	300.0	10000.0	2200.0
Հրազդան						2	1764.0	300.0	8000.0	1480.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						3	730.0	250.0	3400.0	380.0
Ամասիա								100.0	300.0	135.0
Անի								150.0	400.0	185.0
Աշոցք								90.0	300.0	120.0

Արթիկ	2	760.0	1690.0	1690.0	1690.0			150.0	900.0	200.0
Սյունիքի մարզ										
Գորիս								150.0	1200.0	390.0
Կապան								150.0	1400.0	410.0
Մեղրի								150.0	900.0	230.0
Սիսիան								150.0	900.0	250.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր								150.0	2200.0	310.0
Վայք						7	757.6	170.0	1400.0	225.0
Տավուշի մարզ										
Բերդ								100.0	1400.0	170.0
Իջևան								150.0	2200.0	600.0
Նոյեմբերյան								100.0	1400.0	210.0

2004թ. հուլիսին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել են անհատույց սեփականաշնորհման 6 գործարքներ 3.04 հա ընդհանուր մակերեսով, ընդ որում 5-ը Արարատի /2.16 հա/ և 1-ը՝ Գեղարքունիքի /0.88 հա/ մարզերում:

2004թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 907 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 10.7 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 26.1 %-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2004թ. հունիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը աճել է 10.6 %-ով, իսկ 2003թ. հուլիսի համեմատ՝ 61.1 %-ով:

2004թ. հուլիսին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 54 բնակարանների, 29 անհատական բնակելի տների, 198 հասարակական, 22 արտադրական նշանակության օբյեկտների, 586 միավոր հողերի և 18 ավտոտնակների վարձակալության գործարքներ:

2004թ. հուլիսին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 109 վարձակալության գործարքների քանակները 2004թ. հունիսի համեմատ աճել են 2.2 անգամ, իսկ 2003թ. հուլիսի համեմատ՝ 78.7%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հուլիսին հանրապետությունում վարձակալվել են 1233.33 հա ընդհանուր մակերեսով հողեր /այդ թվում 5.83 հա Երևանում/: Մարզերում վարձակալված հողերից 1111.42 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 14.68 հա բնակավայրերի, 98.90 հա արդյունաբերական օբյեկտների, 2.50 հա հատուկ պահպանվող տարածքների հողեր: Հողերի վարձակալության առավել մեծ ծավալներ են արձանագրվել Արարատի մարզում՝ 345.26 հա, որից 342.75 հա գյուղատնտեսական նշանակության: 2004թ. հուլիսին համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 318.00 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2004թ. հուլիսին համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

Մարզի անվանումը	Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշ հողերի		Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտեսական նշ հողերի	
	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/	Վարձակալության գործարքների քանակները /հատ/	Վարձակալված հողերի մակերեսները /հա/
Արագածոտն	0	0.00	52	197.31
Արարատ	3	306.00	11	36.75
Արմավիր	0	0.00	7	231.45
Գեղարքունիք	0	0.00	34	67.14

Լոռի	1	10.00	16	32.40
Կոտայք	1	2.00	64	66.26
Շիրակ	0	0.00	25	131.89
Սյունիք	0	0.00	9	14.30
Վայոց Ձոր	0	0.00	58	15.42
Տավուշ	0	0.00	2	0.50
Ընդամենը	5	318.00	278	793.42

2004թ. հուլիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 626 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.4 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը 2003թ. հուլիսի համեմատ աճել է 62.6 %-ով, իսկ 2004թ. հունիսի համեմատ՝ նվազել է 0.9 %-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 42.2%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /58.1%/, հասարակական նշանակության օբյեկտների /16.1%/, առանձնատների /15.8%/ և հողերի /5.1%/, նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 390 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2004թ. հունիսի համեմատ, աճել է 9.9%-ով, իսկ 2003թ. հուլիսի համեմատ՝ 72.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2004թ. հուլիսին հանրապետությունում գրավադրվել են 59.84 հա /այդ թվում 5.25 հա Երևանում/ մակերեսով հողեր, որից 54.58 հա գյուղատնտեսական նշանակության: Հողերի առավել մեծ ծավալներ են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 30.79 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2004թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների ապապետականացման միջոցով մասնավորեցման, համապատասխանաբար 21 և 5 գործարքներ, որոնց ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.3%: 2003թ. հուլիսի համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը աճել է 18.2% -ով, իսկ 2004թ. հունիսի համեմատ՝ նվազել 58.1%-ով: 2004թ. հուլիսին մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Կոտայքի մարզում՝ 42.3 %:

2004թ. հուլիսին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 1387 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2003թ. հուլիսի համեմատ աճել է 43.4 %-ով, իսկ 2004թ. հունիսի համեմատ՝ 1.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 16.3%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /52.1%/:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն